Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի <<Պատմություն>> առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի (ԿԳՄՍ նախարարի 2021թ-ի մարտի 10-ի N345-Ա/2 հրաման):

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) գրավոր դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),(միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական փաստաթուղթ)

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

10)Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն(մասնակցած լինելու դեպքում)

11)«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի). պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12)«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի փետրվարի 20-ից մինչև մարտի 5-ը ներառյալ, ամեն օր, ժամը՝10^{00}-ից մինչև 15^{00}, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ գործող կարգի:

Մրցույթները տեղի կունենան 2025թ-ի մարտի 10-ին, ժամը՝ 14^{00}-ին, <<ՀՀ Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Ոսկետափ, Երևանյան խճուղի 48

Տեղեկությունների համար զանգահարել՝093-33-80-58 հեռախոսահամարով: